***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

*<u>Օրակարգ-7</u>*

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0021-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.18571 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/***

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 7-րդ փողոց 2/2 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0021-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատական նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության **0.18571** հեկտար մակերեսով հողամասը, բնակավայրի էլեկտրոնային կադաստրային քարտեզում գրանցված է քաղաքացու անվամբ, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր:

Էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով, որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 08-003-0021-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.18571 հեկտար մակերեսով հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամաս 7-րդ փողոց 2/2 հողամաս/ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0021-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.18571 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ կադաստրային քարտեզագրման անճշտության հետևանով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 7-րդ փողոց 2/2 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0021-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատական նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.18571 հեկտար մակերեսով հողամասը, բնակավայրի էլեկտրոնային կադաստրային քարտեզում գրանցված է քաղաքացու անվամբ, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 08-003-0021-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.18571 հեկտար մակերեսով հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամաս 7-րդ փողոց 2/2 հողամաս/ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-8</u>

**8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0034-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,001793 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՀԱՅԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արմեն Հայկի Մարգարյանը բնակչության հասարակական սպասարկման <<Coffee-Coffee>> տիպի շարժական տաղավար տեղադրելու նպատակով 17.93 քառ. մետր մակերեսով հողամաս հատկացնելու խնդրանքով:

Կատարված ուսումնասիրության արդյունքում նշված նպատակի համար նախընտրելի է համարվել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 003-0034-0048 կադաստրային ծածկագրով 0,001793 մակերեսով հողամասը, որն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում /հասցեն՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ Մ.Մադաթյան փողոց, 15/20 հողամաս/:

Որոշման նախագծով նախատեսվում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0034-0048 կադաստրային ծածկագրով 0,001793 հեկտար մակերեսով հողամասը /Վկայական՝ 09042025-08-0010/, ուղղակի կարգով, կառուցապատման իրավունքով, 20 /քսան/ տարի ժամկետով, տարեկան 40 000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի Արմեն Հայկի Մարգարյանին՝ այդ հողամասում բնակչության հասարակական սպասարկման <<Coffee-Coffee>> տիպի շարժական տաղավար տեղադրելու նպատակով:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 481-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 46.2.-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0034-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,001793 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՀԱՅԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^{1}$-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 46.2.-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0034-0048 կադաստրային ծածկագրով 0,001793 հեկտար մակերեսով հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, հաշվի առնելով քաղաքացի Արմեն Հայկի Մարգարյանի 2025 թվյանի փետրվարի 18-ի դիմումը՝ <<Coffee-Coffee>> տիպի շարժական տաղավար տեղադրելու համար հողամաս հատկացնելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Մ. Մադաթյան փողոց 15/20 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0034-0048 կադաստրային ծածկագրով **0,001793** հեկտար մակերեսով հողամասը /Վկայական՝ 09042025-08-0010, հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ Մ.Մադաթյան փողոց, 15/20 հողամաս/, ուղղակի կարգով, կառուցապատման իրավունքով, 20 /քսան/ տարի ժամկետով, տարեկան **40 000 /քառասուն հազար/** Հայաստանի

Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի Արմեն Հայկի Մարգարյանին /Նույնականացման քարտ՝ 006052997, տրված՝ 06.05.2016թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց տուն 62, հետագայում՝ Քաղաքացի/՝ այդ հողամասում բնակչության հասարակական սպասարկման <<Coffee-Coffee>> տիպի շարժական տաղավար տեղադրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Քաղաքացու հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-9</u>

**9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳԱԳԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի փետրվարի 2-ի դիմումով Անի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Գագիկ Սեյոժայի Նալբանդյանը, որով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված 54.82 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան շինության, 169.95 քառակուսի մետր օժանդակ շինությունների /ավտոտնակ՝ 130.50, օժանդակ շինություն՝ 29.87, աստիժանավանդակ՝ 2.65, պարիսպ՝ 6.93 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-118-0025-0071 կադաստրային ծածկագրով 0.04262 հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 0711202408-0055, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, 29/1 բնակելի տուն) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը:

Որոշման նախագծով նախատեսվում է օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված 54.82 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան

շինությունը, 169.95 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները /ավտոտնակ՝ 130.50, օժանդակ շինություն՝ 29.87, աստիժանավանդակ՝ 2.65, պարիսպ՝ 6.93 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-118-0025-0071 կադաստրային ծածկագրով 0.04262 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 0711202408-0055, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, 29/1 բնակելի տուն) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **330 857 (երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր հիսունյոթ)** Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Գագիկ Սեյոժայի Նալբանդյանին /Անձնագիր՝ AS0360955, տրված՝ 06.09.2018թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, տուն 29, հետագայում՝ Քաղաքացի/:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-12-24 ծածկագիր՝ 20235EWTWE,

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳԱԳԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-12-24 ծածկագիր՝ 20235EWTWE, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Գագիկ Սեյոժայի Նալբանդյանը, իր 2024 թվականի փետրվարի 2-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական

ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **54.82** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան շինության, **169.95** քառակուսի մետր օժանդակ շինությունների /ավտոտնակ՝ 130.50, օժանդակ շինություն՝ 29.87, աստիժանավանդակ՝ 2.65, պարիսպ՝ 6.93 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-118-0025-0071 կադաստրային ծածկագրով **0.04262** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 0711202408-0055, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, 29/1 բնակելի տուն) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **54.82** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան շինությունը, **169.95** քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները /ավտոտնակ՝ 130.50, օժանդակ շինություն՝ 29.87, աստիժանավանդակ՝ 2.65, պարիսպ՝ 6.93 քառակուսի մետր/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-118-0025-0071 կադաստրային ծածկագրով **0.04262** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 0711202408-0055, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, 29/1 բնակելի տուն) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **330 857 (երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Գագիկ Սեյրժայի Նալբանդյանին /Անձնագիր՝ AS0360955, տրված՝ 06.09.2018թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, տուն 29, հետագայում՝ Քաղաքացի/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-10</u>

**10) ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0115-0072 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.6 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-072-0115-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.18 ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի օգոստոսի 17-ի դիմումով Անի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Հայկ Վարդանի Պողոսյանը՝ Ձիթհանքով համայնքի ղեկավարի և քաղաքացու միջև կնքված, նոտարական վավերացում ստացած 08-072-0115-0072 կադաստրային ծածկագրով 2.6 հեկտար և 08-072-0115-0032 կադաստրային ծածկագրով 1.18 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելող հողատեսքի հողամասերի վարձակալության 2003 թվականի մարտի 14-ի պայմանագրի 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամեկտը երկարացնել խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է Ձիթհանքով համայնքի ղեկավարի և քաղաքացի Հայկ Վարդանի Պողոսյանի միջև կնքված և նոտարական վավերացում ստացած 08-072-0115-0072 կադաստրային ծածկագրով 2.6 հեկտար և 08-072-0115-0032 կադաստրային ծածկագրով 1.18 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելող հողատեսքի հողամասերի վարձակալության 2003 թվականի մարտի 14-ի պայմանագրի 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամեկտը երկարացնել 10 /տաս/ տարով՝ մինչև 2033 թվականի մարտի 14-ը:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթերով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով հաստատված <<Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին>> 7.1.-րդ կետը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

## ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0115-0072 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.60 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-072-0115-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.18 ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով հաստատված <<Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին>> 7.1.-րդ կետը, Ձիթհանքով համայնքի ղեկավարի և քաղաքացի Հայկ Վարդանի Պողոսյանի միջև կնքված և նոտարական վավերացում ստացած <<Հողամասի վարձակալության>> 2003

թվականի մարտի 14-ի պայմանագրի 8-րդ կետերը, հաշվի առնելով քաղաքացի Հայկ Վարդանի Պողոսյանի 2024 թվականի օգոստոսի 17-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տալ համաձայնություն Ձիթհանքով համայնքի ղեկավարի և քաղաքացի Հայկ Վարդանի Պողոսյանի միջև կնքված և նոտարական վավերացում ստացած 08-072-0115-0072 կադաստրային ծածկագրով 2.6 հեկտար և 08-072-0115-0032 կադաստրային ծածկագրով 1.18 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելող հողատեսքի հողամասերի վարձակալության 2003 թվականի մարտի 14-ի պայմանագրի 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամկետը երկարացնել 10 /տաս/ տարով՝ մինչև 2033 թվականի մարտի 14-ը:

2. Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Վարձակալի հետ կնքել համապատասխան համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգի 12-14-րդ հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյանին:

<u>Օրակարգ-11</u>

**11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/

Զեկուցողը ավագանուն ներկայացրեց համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի ցանկը:

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Մարալիկի արվեստ դպրոց» համայնքային բյուջետային հիմնարկ**

| Հ/հ | Գույքի անվանումը | Ձեռքբերման տարեթիվ | Չափի միավոր | Միավորի արժեք /ՀՀ | Փաստացի | | Հաշվապահական հաշվառմամբ | | Ձեռքբերման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քանակ | Գումար /ՀՀ | Քանակ | Գումար /ՀՀ | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դրամ / | | դրամ/ | | դրամ/ | |
| 1. | Շերտավարագույր | 2025թ | քառ. մ. | 5500 | 5 | 27500 | 5 | 27500 | Անի համայնքի բյուջե |
| 2. | Դահլիճի աթոռ | 2025թ | հատ | 10000 | 60 | 600000 | 60 | 600000 | Անի համայնքի բյուջե |
| 3. | Պահարան | 2025թ | հատ | 49000 | 10 | 490000 | 10 | 490000 | Նվիրատվություն/ «Հայ դպրոց» հիմնադրամ |
| 4. | Ուսուցչական սեղան | 2025թ | հատ | 18000 | 7 | 126000 | 7 | 126000 | Նվիրատվություն/ «Հայ դպրոց» հիմնադրամ |
| 5. | Ուսուցչական աթոռ | 2025թ | հատ | 11500 | 7 | 80500 | 7 | 80500 | Նվիրատվություն/ «Հայ դպրոց» հիմնադրամ |
| 6. | Աշակերտական սեղան և 2 աթոռ | 2025թ | կոմպլ | 25500 | 20 | 510000 | 20 | 510000 | Նվիրատվություն/ «Հայ դպրոց» հիմնադրամ |
| 7. | Գրատախտակ | 2025թ | հատ | 18400 | 3 | 55200 | 3 | 55200 | Նվիրատվություն/ «Հայ դպրոց» հիմնադրամ |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **1889200** | | **1889200** | |

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**

| Հ/ | Գույքի անվանումը | Ձեռքբերման | Չափի միավոր | Միավորի | Փաստացի | Հաշվապահական հաշվառմամբ | Ձեռքբերման |
|---|---|---|---|---|---|---|---|

| հ | | տարեթիվ | | արժեք /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կալորիֆեր | 2024թ | հատ | 72000 | 1 | 72000 | 1 | 72000 | Մարզադպրոցի բյուջե |
| 2. | Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ | 2024թ | հատ | 50000 | 1 | 50000 | 1 | 50000 | Մարզադպրոցի բյուջե |
| 3. | ՈՒՆիտազ | 2024թ | հատ | 28000 | 1 | 28000 | 1 | 28000 | Մարզադպրոցի բյուջե |
| 4. | Գրատախտակ | 2025թ | հատ | 6900 | 1 | 6900 | 1 | 6900 | Մարզադպրոցի բյուջե |
| 5. | Փոշեկուլ | 2025թ | հատ | 109200 | 1 | 109200 | 1 | 109200 | Մարզադպրոցի բյուջե |
| 6. | Համակարգիչ | 2025թ | կոմպլ | 165000 | 1 | 165000 | 1 | 165000 | Մարզադպրոցի բյուջե |
| 7. | Ծանրաձողի կշռաքար 15կգ | 2025թ | հատ | 45000 | 2 | 90000 | 2 | 90000 | Նվիրատվություն/ բարեգործ |
| 8. | Ծանրաձողի կշռաքար 10կգ | 2025թ | հատ | 30000 | 4 | 120000 | 4 | 120000 | Նվիրատվություն/ բարեգործ |
| 9. | Ծանրաձողի կշռաքար 5կգ | 2025թ | հատ | 15000 | 4 | 60000 | 4 | 60000 | Նվիրատվություն/ բարեգործ |
| | **Ընդամենը** | | | | | **701100** | | **701100** | |

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Մարալիկի երաժշտական դպրոց» համայնքային բյուջետային հիմնարկ**

| Հ/հ | Գույքի անվանումը | Ձեռքբերման տարեթիվ | Չափի միավոր | Միավորի արժեք /ՀՀ դրամ/ | Փաստացի | | Հաշվապահական հաշվառմամբ | | Ձեռքբերման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | |
| 1. | Թմբուկ /TJW22*10/ | 2024 | հատ | 112000 | 2 | 224000 | 2 | 224000 | Նվիրատվություն/ «Իմ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 2. | Թմբուկ /TJW18*10/ | 2024 | հատ | 90000 | 2 | 180000 | 2 | 180000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 3. | Թմբուկ /TJW14*14/ | 2024 | հատ | 45000 | 4 | 180000 | 4 | 180000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 4. | Շեփոր/ Տրոմբոն /MJ108/ | 2024 | հատ | 85000 | 1 | 85000 | 1 | 85000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 5. | Շեփոր M4015 | 2024 | հատ | 75000 | 1 | 75000 | 1 | 75000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 6. | Շեփոր /M4024/ /Տրոմբոն/մխոցային մեխանիզմով | 2024 | հատ | 120000 | 1 | 120000 | 1 | 120000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 7. | Սինթեզատոր /Yamahm PSR-E2123/ | 2024 | հատ | 80000 | 1 | 80000 | 1 | 80000 | Նվիրատվություն/ «Իմ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 8. | Բարձրախոս /Tape ecorder/ | 2024 | հատ | 80000 | 2 | 80000 | 2 | 80000 | Նվիրատվություն/ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ |
| 9. | Ջահ դահլիճի | 2025 | հատ | 0 | 2 | 0 | 2 | 0 | Նվիրատվություն/ Անիի համայնք ապետարան |
| 10. | Փափուկ աթոռներ երկաթյա հիմքով | 2025 | հատ | 9996 | 50 | 499800 | 50 | 499800 | Անի համայնքի բյուջե |
| | **Ընդամենը** | | | | | **1523800** | | **1523800** | |

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Մարալիկի քաղաքային գրադարան» համայնքային բյուջետային հիմնարկ**

| Հ/հ | Գույքի անվանումը | Ձեռքբերման տարեթիվ | Չափի միավոր | Միավորի արժեք /ՀՀ դրամ/ | Փաստացի | | Հաշվապահական հաշվառմամբ | | Ձեռքբերման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | |
| 1. | Գրականություն | 2025 | հատ | | 19 | 66100 | 19 | 66100 | Նվիրատվություն/ Անիի համայնքի բյուջե |
| | **Ընդամենը** | | | | | **66100** | | **66100** | |

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**

| Հ/ | Գույքի անվանումը | Ձեռքբեր ման | Չափի միավոր | Միավորի | Փաստացի | Հաշվապահական հաշվառմամբ | Ձեռքբերման |
|---|---|---|---|---|---|---|---|

| հ | | տարեթիվ | | արժեք /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Եփող մակերես TESLA | 2025 | հատ | 142800 | 1 | 142800 | 1 | 142800 | Անի համայնքի բյուջե |
| | **Ընդամենը** | | | | | **142800** | | **142800** | |

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Մարալիկի Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**

| Հ/հ | Գույքի անվանումը | Ձեռքբերման տարեթիվ | Չափի միավոր | Միավորի արժեք /ՀՀ դրամ/ | Փաստացի | | Հաշվապահական հաշվառմամբ | | Ձեռքբերման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | Քանակ | Գումար /ՀՀ դրամ/ | |
| 1. | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք /CANON IMAGE CLASS MF3010 2208/ | 2025 | հատ | 125000 | 1 | 125000 | 1 | 125000 | Մանկապարտեզի բյուջե |
| | **Ընդամենը** | | | | | **125000** | | **125000** | |

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-12</u>

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/***

Զեկուցողը ներկայացրեց ավագանուն ներկայացրեց Անի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1

հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Ավագանու որշման հավելվածները կցվում են արձանագրությանը:

<u>Օրակարգ-13</u>

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՇՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/***

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց <<Անիի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի և համայնքային ենթակայության կազմակերպությունների մաշված և օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրսգրման կարգի նախագիծը:

Նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն որոշումը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՇՎԱԾ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն որոշումը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անիի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի և համայնքային ենթակայության կազմակերպությունների մաշված և օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրսգրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-14</u>

**14) ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՑ 28-Ը ԿԱՅԱՑԱԾ ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆԱՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԺՈՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահը իր 2025 թվականի ապրիլի 1-ի N 67 գրությամբ տեղեկացրել է, որ Կիպրոսի հանրապետությունում 2025 թվականի ապրիլի 22-ից 28-ը կայանալիք սամբոյի Եվրոպայի առաջնության մասնակիցների կազմում են ընդգրկվել Անի համայնքի Մարալիկ քաղաքի «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն մարզիկներ՝ Սյուզաննա Մանուկյանը և Ժորա Բաղդասարյանը, խնդրել է հոգալ նրանց գործուղման ծախսերը և ներկայացրել է ծախցերի նախահաշիվ:

Որոշման նախագծով նախատեսվում է Կիպրոսի հանրապետությունում 2025 թվականի ապրիլի 22-ից 28-ը կայացած սամբոյի Եվրոպայի առաջնության մասնակիցներ, Սյուզաննա Մանուկյանի և Ժորա Բաղդասարյանի գործուղման ծախսերի համար համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից յուրաքնչյուր մասնակցի տրամադրել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՑ 28-Ը ԿԱՅԱՑԱԾ ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆԱՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԺՈՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահի 2025 թվականի ապրիլի 1-ի N 67 գրությունը՝ սամբոյի Եվրոպայի առաջնության մասնակիցներ՝ Սյուզաննա Մանուկյանի և Ժորա Բաղդասարյանի գործուղման ծախսերը հոգալու մասին, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Կիպրոսի հանրապետությունում 2025 թվականի ապրիլի 22-ից 28-ը կայացած սամբոյի եվրոպայի առաջնության մասնակիցներ, Անի համայնքի բնակիչներ՝ Սյուզաննա Մանուկյանի և Ժորա Բաղդասարյանի գործուղման ծախսերի համար համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից յուրաքնչյուր մասնակցի տրամադրել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

2. Հաշվի առնելով, որ Սյուզաննա Մանուկյանը անչափահաս է, սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական աջակցությունը հատկացնել նրա ծնողին՝ Կարեն Մանուկի Մանուկյանին /անձնագիր AT0388569, տրված՝ 18.02.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Շիրազի փողոց, շենք 35, բնակարան 10/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-15</u>**

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/***

Զեկուցողը նշեց, որ համայնքային ենթակայության <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի սանիտարական մաքրման, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բնարձրցնելու համար անհրաժեշտություն է առաջացել Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը,

հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Որոշման նախագծով նախատեսվում է ավելացնել հետևյալ հաստիքը՝

| **Հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 12 | Բրիգադիրի օգնական | 1 | 165 000 | 1 | 165 000 |

Իսկ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի կոմունալ տնտեսության պատասխանատուների պաշտոնային դրույքաչափերը սահմանել ըստ բնակավայրերի տնային տնտեսությունների քանակի հաշվառմամբ՝

| **Հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 23 | **<u>Կոմունալ տնտեսության պատասխանատու</u>** | | | | |
| | Մինչև 100 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 5 | 130 000 | 1 | 650 000 |
| | 101-150 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 5 | 140 000 | 1 | 700 000 |
| | 151-200 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 2 | 150 000 | 1 | 300 000 |
| | 201 և ավելի տնային տնտեսություն ունեցող բնակավայրի համար | 3 | 160 000 | 1 | 480 000 |

Որոշման նախագծով նախատեսվում է նաև հանել տեխնիկական սպասարկման ոլորտի <<Նիվա>> մակնիշի ավտոմեքենայի վարորդ – մեխանիկի հաստիքը:

| **Հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 46 | <<Նիվա>> մակնիշի ավտոմեքենայի վարորդ - մեխանիկ | 1 | 150 000 | 1 | 150 000 |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով:

Նշվեց, որ որոշման նախագծով նախատեսված փոփոխությունների և լրացումների արդյունքում <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի աշխատավարձի ծախսերը կավելանան ընդամենը՝ 445 000 ՀՀ դրամով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) որոշման հավելվածի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 46-րդ կետը՝

<<

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 46 | <<Նիվա>> մակնիշի ավտոմեքենայի վարորդ - | 1 | 150 000 | 1 | 150 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մեխանիկ | | | | |

>>

հանել:

բ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 3-րդ սյունակի վանդակում նշված «26» թիվը փոխարինել «25» թվով:

գ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 4-րդ սյունակի վանդակում նշված «3 550 000» թիվը փոխարինել «3 400 000» թվով:

դ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում նշված «4 320 000» թիվը փոխարինել «4 170 000» թվով:

ե) Որոշման հավելվածի <<ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 11-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 12-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

<<

| **Հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 12 | Բրիգադիրի օգնական | 1 | 165 000 | 1 | 165 000 |

>>

զ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 3-րդ սյունակի վանդակում նշված «40» թիվը փոխարինել «41» թվով:

է) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 4-րդ սյունակի վանդակում նշված «1 405 000» թիվը փոխարինել «1 570 000» թվով:

ը) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում նշված «4 540 000» թիվը փոխարինել «4 705 000» թվով:

թ) Որոշման հավելվածի <<ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<

| **Հ/հ** | **Հաստիքի անվանումը** | **Հաստիքի քանակը** | **Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/** | **Սահմանված դրույքը** | **Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 23 | **Կոմունալ տնտեսության պատասխանատու** | | | | |
| | Մինչև 100 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 5 | 130 000 | 1 | 650 000 |
| | 101-150 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 5 | 140 000 | 1 | 700 000 |
| | 151-200 տնային տնտեսություն ունեցող բնակավայրերի համար | 2 | 150 000 | 1 | 300 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 201 և ավելի տնային տնտեսություն ունեցող բնակավայրի համար | 3 | 160 000 | 1 | 480 000 |

>>

ժ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 4-րդ սյունակի վանդակում նշված «730 000» թիվը փոխարինել «1 160 000» թվով:

ի) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում նշված «2 847 500» թիվը փոխարինել «3 290 000» թվով:

լ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 4-րդ սյունակի վանդակում նշված «9 000 000» թիվը փոխարինել «9 445 000» թվով:

խ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 6-րդ սյունակում նշված «17 465 000» թիվը փոխարինել «17 922 500» թվով:

ծ) Որոշման հավելվածի 1-ին սյունակի 12-րդ կետից հետո հաստիքների հերթական համարակալումը սահմանել ըստ հերթականության՝ 12-ից 51 թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

<u>Օրակարգ-16</u>

**16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ 48.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՎԵՑ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ <<IT In Villages>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/***

Զեկուցողը նշեց, որ 2025 թվականի ապրիլի 4-ի դիմումով Անիի համայնքապետարան է դիմել **<<IT In Villages>>** հասարակական կազմակերպությանը նախագահ Կարինե Ավետիսյանը՝ Սառնաղբյուր բնակավայրի 7-10-րդ դասարանի երեխանների հմար <<C++>> ծրագրավորման լեզվի վեց ամիս ժամկետով անվճար դասընթաց կազմակերպելու համար համատասխան սենյակ տրամադրելու խնդրանքով:

Կարևորելով ծրագրավորման լեզվի ավճար դասընթացի կազմակերպումը, զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի երրորդ հարկում գտնվող 48.25 քառակուսի մետր մակերեսով սենյակը 2025 թվականի հունիսի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում անհատույց օգտագործման տրամադրել <<IT In Villages>> հասարակական կազմակերպությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ 48.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՎԵՑ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ <<IT In Villages>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով <<IT In Villages>> հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Ավետիսյանի 2025 թվականի ապրիլի 4-ի դիմումը՝ Սառնաղբյուր բնակավայրի 7-10-րդ դասարանի երեխաների համար <<C++>> ծրագրավորման լեզվի վեց ամիս ժամկետով անվճար դասընթաց կազմակերպելու նախաձեռնության վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի երրորդ հարկում գտնվող 48.25 քառակուսի մետր մակերեսով սենյակը 2025 թվականի հունիսի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում անհատույց օգտագործման տրամադրել <<IT In Villages>> հասարակական կազմակերպությանը՝ Սառնաղբյուր բնակավայրի 7-10-րդ դասարանի երեխաների համար <<C++>> ծրագրավորման լեզվի անվճար դասընթաց կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված դասընթացի պատշաճ կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգի 17-23 հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանին:

<u>Օրակարգ-17</u>

**17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԵՑ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ,**

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ Գուսանագյուղ բնակավայրի բնակիչներից դիմումներ են ստացվել գյուղատնտեսական նշանակության վարելահողեր վարձակալելու խնդրանքով: Հարցը քննարկվել է աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի բաժնի և Գուսանագյուղի վարչական ղեկավար պարոն Հարությունյանի հետ:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Գոսանագյուղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի վեց կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

Հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման համար նախատեսվում է մրցույթի հետրյալ պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը, որը ներկայացված է հավելվածի տեսքով:

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը/ Վկայական N | Հողամասի հողատեսքը | Հողի որակական հատկանիշները /ջրովի/ անջրդի, հողի կարգ/ | Հողամասի մակերեսը (հա) | Հաղորդակ-ցուղիների առկայությունը | Մրցույթի ձևը | Վարձա կա-լության ժամկետը (տարի) | Հողամասի մեկ տարվա վարձավճարի մեկնարկային չափը (ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանագյուղ վարելահող | 08-036-0206-0031 N 04122012-08-0289 | Վարելահող | Անջրդի III կարգ | 1.8 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 14 400 |
| 2. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանագյուղ վարելահո | 08-036-0205-0036 N 04122012-08-0286 | Վարելահող | Անջրդի III կարգ | 1.025 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 8 200 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ղ | | | | | | | | |
| 3. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանա գյուղ վարելահող | 08-036-0205-0035 N 04122012-08-0299 | Վարելահող | Անջրդի III կարգ | 1.63667 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 13 100 |
| 4. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանա գյուղ վարելահող | 08-036-0226-0050 N 04122012-08-0300 | Վարելահող | Անջրդի III կարգ | 0.78554 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 6 300 |
| 5. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանա գյուղ վարելահող | 08-036-0228-0020 N 04122012-08-0297 | Վարելահող | Անջրդի III կարգ | 1.21 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 9 700 |
| 6. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Գուսանա գյուղ վարելահող | 08-036-0206-0032 N 04122012-08-0313 | Վարելահող | Անջրդի III կարգ | 1.214 | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 9 800 |

Հողամասերի վարձավճարի մեկնարկային չափը մեկ հեկտարի համար սահմանված է 8000 ՀՀ դրամ:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ

մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԵՑ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի վեց կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

2. Հաստատել հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>**Օրակարգ-18**</u>

**18) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 20 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՎԵՏԼԱՆԱ ՊԵՏՐՈՍԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՎԵՑ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարի է դիմել Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 20 շենք, թիվ 6 հասցեի բնակարանի բնակիչ Սվետլանա Պետրոսի Աղաջանյանը նշված հասցեի բնակարանը սեփականության իրավունքով իր վեց անձից բաղկացած ընտանիքին նվիրելու խնդրանքով: Տվյալ բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում այդ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 20, բնակարան 6 հասցեի 85.65 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-003-006, Վկայական՝ N 16042025-08-0070/ ըրդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Սվետլանա Պետրոսի Աղաջանյանի վեց անձից բաղկացած ընտանիքին:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի փետրվարի 21-ի N 550 տեղեկանքը՝ քաղաքացի Սվետլանա Պետրոսի Աղաջանյանի վեց անձից բաղկացած ընտանիքը Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 20 շենք, թիվ 6 հասցում փաստացի բնակվելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 20 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՎԵՏԼԱՆԱ ՊԵՏՐՈՍԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՎԵՑ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 20, բնակարան 6 հասցեի բնակարան օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի

սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի փետրվարի 21-ի N 550 տեղեկանքը, համաձայն որի քաղաքացի Սվետլանա Պետրոսի Աղաջանյանի վեց անձից բաղկացած ընտանիքը փաստացի բնակվում է Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 20 շենք, թիվ 6 հասցեի բնակարանում և հաշվառված են տվյալ հասցեում, հաշվի առնելով քաղաքացի Սվետլանա Պետրոսի Աղաջանյանի 2025 թվականի փետրվարի 21-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 20, բնակարան 6 հասցեի 85.65 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-003-006, Վկայական՝ N 16042025-08-0070/ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Սվետլանա Պետրոսի Աղաջանյանի վեց անձից բաղկացած ընտանիքին /հետագայում Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Սվետլանա Պետրոսի Աղաջանյանին /Անձնագիր՝ AU0527582, տրված՝ 29.11.2021թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 20 շենք, բնակարան 6/, որդուն՝ Գագիկ Գևորգի Հարոյանին /Անձնագիր՝ AL06356160, տրված՝ 20.02.2024թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 20 շենք, բնակարան 6/, հարսին՝ Զեփյուռ Սամվելի Պետրոսյանին /Անձնագիր՝ AS0242173, տրված՝ 22.06.2018թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր, 1-ին փողոց, 20 շենք, բնակարան 6/, թոռանը՝ Գևորգ Գագիկի Հարոյանին /ծննդյան վկայական ԱԲ N 540186, տրված՝ 12.06.2017թ/, թոռանը՝ Սվետլանա Գագիկի Հարոյանին /ծննդյան վկայական ԲԱ320280, տրված՝ 18.11.2020թ/, թոռանը՝ Սոֆի Գագիկի Հարոյանին / ծննդյան վկայական ԲԱ 663051, տրված՝ 25.01.2023թ/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

**Օրակարգ-19**

**19) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 22 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՐՏՈՒՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՐԵՔ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/***

Հարգելի գործընկերներ.

Այս հարցը նույնպես վերաբերվում է Անիպեմզա բնակավայրում բնակարանի նվիրատվությանը:

Անի համայնքի ղեկավարի է դիմել Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 22, բնակարան 6 հասցեի բնակարանի բնակիչ Արմեն Արտուշի Կարապետյանը նշված հասցեի բնակարանը սեփականության իրավունքով իր երեք անձից բաղկացած ընտանիքին նվիրելու խնդրանքով: Տվյալ բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում այդ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 22, բնակարան 6 հասցեի 85.65 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-004-007, Վկայական՝ N 05022025-08-0075/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի երեք անձից բաղկացած ընտանիքին:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի հունիսի 17-ի N 189 տեղեկանքը՝ քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի երեք անձից բաղկացած ընտանիքը Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 20 շենք, թիվ 6 հասցում փաստացի բնակվելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 22 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՐՏՈՒՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՐԵՔ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 22, բնակարան 6 հասցեի բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի հունիսի 17-ի N 189 տեղեկանքը, համաձայն որի քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի երեք անձից բաղկացած ընտանիքը փաստացի բնակվում է Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 22 շենք, թիվ 6 հասցեի բնակարանում և հաշվառված են տվյալ հասցեում, հաշվի առնելով քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի 2025 թվականի հունվարի 17-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 22, բնակարան 6 հասցեի 85.65 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-004-007, Վկայական՝ N 05022025-08-0075/ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի երեք անձից բաղկացած ընտանիքին /հետագայում Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Արմեն Արտուշի Կարապետյանին /նույնականացման քարտ՝ 2004790016, տրված՝ 27.08.2024թ. 028-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 22 շենք, թիվ 6 բնակարան/, կնոջը՝ Նելլի Մանուկի Աշխատոյանին /նույնականացման քարտ՝ 7503810033, տրված՝ 27.08.2024թ. 028-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 22 շենք, թիվ 6 բնակարան/, որդուն՝ Արտուշ Արմենի Կարապետյանին /նույնականացման քարտ՝ 1921020024, տրված՝ 20.07.2022թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր, 1-ին փողոց, 22 շենք, թիվ 6 բնակարան/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

Օրակարգ-20

**21) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 28 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՅԱՆԵ ՍՈՒՐԻԿԻ ԱՂԱՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ այս հարցը նույնպես վերաբերվում է Անիպեմզա բնակավայրում բնակարանի նվիրատվությանը:

Այս դեպքում Անի համայնքի ղեկավարի է դիմել Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 28, բնակարան 5 հասցեի բնակարանի բնակիչ Գայանե Սուրիկի Աղանյանը՝ նշված հասցեի բնակարանը սեփականության իրավունքով իր երկու անձից բաղկացած ընտանիքին նվիրելու խնդրանքով: Տվյալ բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում այդ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 28, բնակարան 5 հասցեի 87.85 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-007-005, Վկայական՝ N 16042025-08-0074/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Գայանե Սուրիկի Աղանյանի երկու անձից բաղկացած ընտանիքին:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի մարտի 11-ի  N 691 տեղեկանքը՝ քաղաքացի Արմեն Արտուշի Կարապետյանի երեք անձից բաղկացած ընտանիքը Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 20 շենք, թիվ 6 հասցում փաստացի բնակվելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 28 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՅԱՆԵ ՍՈՒՐԻԿԻ ԱՂԱՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 28, բնակարան 5 հասցեի բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի մարտի 11-ի N 691 տեղեկանքը, համաձայն որի քաղաքացի Գայանե Սուրիկի Աղանյանի երկու անձից բաղկացած ընտանիքը փաստացի բնակվում է Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 28 շենք, թիվ 5 հասցեի բնակարանում և հաշվառված են տվյալ հասցեում, հաշվի առնելով քաղաքացի Վարդան Սարգսի Մուրադյանի 2025 թվականի մարտի 11-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, շենք 28, բնակարան 5 հասցեի 87.85 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-007-005, Վկայական՝ N 16042025-08-0074/ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Գայանե Սուրիկի Աղանյանի երկու անձից բաղկացած ընտանիքին /հետագայում Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Գայանե Սուրիկի Աղանյանի /Անձնագիր՝ AU0518507, տրված՝ 23.11.2021թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 28 շենք, բնակարան 5/, որդուն՝ Վարդան Սարգսի Մուրադյանին /Անձնագիր՝ AP0679646, տրված՝ 23.01.2017թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 28 շենք, բնակարան 5/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

<u>Օրակարգ-21</u>

**21) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0020-0213 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00312 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-003-0020-0218 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0065 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ**

**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան ստացվել են դիմումներ՝ հասարակական նշանակության առևտրի օբյեկտներ կառուցելու նպատակով համապատասխան հողամասեր գնելու խնդրանքով:

Անիի համայնքապետարանը մշտապես խրախուսում է գործարար նախաձեռնությունները, կարևորում է նոր աշխատատեղերի ստեղծումը և համապատասխան ներդրումների կատարումը:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0213 կադաստրային ծածկագրով 0,00312 հեկտար և 08-003-0020-0218 կադաստրային ծածկագրով 0,0065 հեկտար մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերն /Վկայական՝ N 19032025-08-0018, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց 33/1 հողամաս, Վկայական՝ N 24032025-08-0024, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց 204/10 հողամաս / օտարել աճուրդով՝ այդ հողամասերում հասարակական նշանակության օբյեկտներ կառուցելու նպատակով:

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, Վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման նպատակը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց, | 08-003-0020-00213 N 19032025-08-0018 | 0.00312 | Բնակավայրերի | Հասարակա-կան կառուցապատման | Հասարակական նշանակության օբյեկտի կառուցում | Բաց աճուրդ | 7 920 000 | 900.0 | 222 394 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 33/1 հողամաս | | | | | | | | | |
| 2. | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, 204/10 հողամաս | 08-003-0020-0218 N 24032025-08-0024 | 0,0065 | Բնակավայրերի | Հասարակա-կան կառուցապատման | Հասարակական նշանակության օբյեկտի կառուցում | Բաց աճուրդ | 7 920 000 | 900.0 | 463 320 |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0020-0213 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00312 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-003-0020-0218 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0065 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0213 կադաստրային ծածկագրով 0,00312 հեկտար և 08-003-0020-0218 կադաստրային ծածկագրով 0,0065 հեկտար մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերն /Վկայական՝ N 19032025-08-0018, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց 33/1 հողամաս, Վկայական՝ N 24032025-08-0024, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց 204/10 հողամաս/ օտարել աճուրդով՝ այդ հողամասերում հասարակական նշանակության օբյեկտներ կառուցելու նպատակով:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-22</u>

**22) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/***

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերության համաձայն համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի իրականացմանը համաձայնություն տալու իրավասությունը վերապահված է համայնքի ավագանուն:

Որոշման նախագծով, որը ներկայացված է հավելվածի տեսքով, Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2026 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Համայնքի շահառու հանդիսացող բնակավայրերը | Իրականացվելիք աշխատանքների հակիրճ նկարագրությունը |
|---|---|---|---|
| 1. | Անի համայնքի | Քաղաք | Ծրագրով նախատեսվում է վերանորոգել՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | Մարալիկ քաղաքի յոթ և Անիավան բնակավայրի երկու բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ. | Մարալիկ, գյուղ Անիավան | Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի թիվ 14-Ա /239.61 քառ.մ/, Աբովյան փողոցի թիվ 21 /703,67 քառ.մ./, Հ. Շիրազի փողոցի թիվ, թիվ 13 /397.88 քառ.մ./,14 /245.53 քառ.մ./, 15 /409.69 քառ.մ/, 16 /243.35 քառ.մ./, 36 /391.73 քառ.մ/, 22 /416.18 քառ. մ/, 18 /411.89 քառ.մ./ Անիավան բնակավայրի 10-րդ փողոցի 6-րդ /478.9 քառ. մ./ և 8-րդ փողոցի 4-րդ /293.31 քառ. մ./ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ և շքամուտքեր:<br>Ընդամենը ծրագրով՝ 4231.74 քառ. մետր տանիքների և 19 շքամուտքերի վերանորոգում:<br>Ծրագրի ուղղակի շահառուների թիվը կազմում է 606 մարդ:<br>Անիավան բնակավայի երկու բնակելի շենքերը և Մարալիկ քաղաքի թվով 9 բազմաբնակարան բնակելի շենքերը կառուցվել են 1950-1990-ական թվականներին:<br>Տանիքների հիմնական նորոգման աշխատանքներ երբևէ չեն իրականացվել:<br>Տանիքածածկերը, ջրհորդանները և կավարամածերը գտնվում են քայքայված և վթարային վիճակում, անձրևաջրերը և ձնհալի ջրերը ներթափանցում են բնակարաններ, քայքայում ներքին հարդարանքը, առաջացնում բարձր խոնավություն և տարփոխիկ հիվանդությունների բռնկման վտանգ:<br>Քայքայված և անբարեկարգ վիճակում են շենքերի շքամուտքերը, առանձին շեներում բացակայում են շքամուտքերի պատուհաններն ու մուտքի դռները:<br>Ըստ նախնական հաշվարկների ծրագրի արժեքը կազմում է 211,300.000 (երկու հարյուր տասնմեկ միլիոն երեք հայրուր հազար) ՀՀ դրամ: |
| 2. | Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 1-ին նրբանցքի և հարակից երեք բազմաբնակարան բնակելի շենքեր մտնող ճանապարհների ասֆալտապատում, մայթերի | Քաղաք Մարալիկ | Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 1-ին նրբանցքը, հարակից երեք բազմաբնակարան բնակելի շենքերի բակեր և ԱԱԾ-ի Անիի բաժին մտնող ճանապարհները:<br>Կառուցապատել մայթերը, բարեկարգել բակային տարածքները և կանաչ գոտիները:<br>Ասֆալտապատման ենթակա Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 1-ին նրբանցքի երկարությունը կազմում է 165 գծ. մետր, մակերեսը՝ 1168 քառ. մետր:<br>Ասֆալտապատման ենթակա երեք բազմաբնակարան բնակելի շենքերի բակեր և |

| | | | |
|---|---|---|---|
| | կառուցապատում և կանաչ գոտիների բարեկարգում | | ԱԱԾ-ի Անիի բաժին մտնող ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 180 գծ. մետր, իսկ մակերեսը 670 քառ. մետր:<br>Ընդամենը ասֆալտապատման աշխատանքներ՝ 346 գծ. մետր, մակերեսը՝ 1838 քառ. մետր:<br>Ընդամենը մայթերի կառուցապատման աշխատանքներ՝ 465 գծ. մետր, մակերեսը՝ 700 քառ. մետր:<br>Կառուցապատման և բարեկարգման ենթակա բակային տարածքների մակերեսը կազմում է 2450 քառ. մետր:<br>Ծրագրի շահառուների թիվը կազմում է 7251 մարդ, տնային տնտեսությունների թիվ՝ 1153:<br>Հիմնանորգման ենթակա Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 1-ին նրբանցքը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում: Նրբանցքը գտնվում է Մարալիկ քաղաքի կառուցապատ տարածքի կենտրոնական մասում և միացում է ապահովում  Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի և քաղաքային հրապարակի միջև, որոնք 2024 թվականին հիմնանորոգվել են հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում:<br>Նրբանցքի հարակից տարածքներում են գտնվում քաղաքի կենտրոնական հանրախանութը, բնակավայրում գործող միակ մանկապարտեզը, ԱԱԾ-ի Անիի բաժնի շենքը, հինգ հարկանի երեք բնակելի շենքեր, <<Արեգակ>> ունիվերսալ վարկային կազմակերպության շենքը և առևտրի ու սպասարկման օբյեկտներ:<br>Նրբանցքը գտնվում է խիստ քայքայված, անբարկարգ վիճակում և լուրջ դժվարություններ են ստեղծվել տրանսպորտային միջոցների և հետիոտն երթևեկության համար: Անբարեկարգ վիճակում են նաև երեք բնակելի շենքեր մտնող ճանապահները և բակային տարածքները:<br>Քայքայված և խարխլված վիճակում են նրբանցքի և բնակելի շենքերը սպասարկող մայթերը:<br>Մայթերի քայքայվածությունը հատկապես լուրջ դժվարություններ  են առաջացնում մանկապարտեզ հաճախող մանկահասակ երեխաների և ծնողների հետիոտն երթևեկության համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Նրբանցքը գտնվելով քաղաքի կենտրոնական մասում, իր քայքայվածությամբ խաթարում է բնակավայրի քաղաքաշինական տեսքը: Ըստ նախնական հաշվարկների ծրագրի արժեքը կազմում է 105,100,000 (մեկ հարյուր հինգ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով և հիմք ընդունվել ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերությունը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերությունը, սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Անի համայնքում ծրագրեր իրականացնելու նպատակով 2025 թվականի ապրիլի 15-ին անցկացված հանրային լսումների վերաբերյալ կազմված արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2026 թվականին սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

Նիստը վարող համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց նիստի մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**
**ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ**

<<28>> ապրիլի 2025 թ.
քաղաք Մարալիկ